Դասղեկի աշխատանքային պլան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ ____________ Ա. Մովսիսյան

« 30 » օգոստոսի 2022թ.

**ՀՀ, Լոռու մարզի, գյուղ Մղարթի**

**հիմն. դպրոցի 9-րդ դասարան**

---

*(ուսումնական հաստատության անվանումը, դասարանը)*

Մամաջանյան Արմինե Սարգսի

Դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը). *Դասարանը բաղկացած է 2 հոգուց: 1 աշակերտը ներառված ներառական կրթության ծրագրում :*

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում.** *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաշվի առնել հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

## 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն**. *Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել աշակերտի քրիստոնեական, ազգային-հոգևոր դաստիարակությանը: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկ ատմամբ: Կարևորել հայեցի դաստիարակությունը հոգևոր ու մշակութային արժեքների հետ ծանոթացման միջոցով:*

3.2 **Գեղագիտական դաստիարակություն**. *Աշակերտների մոտ ձևավորել բարձր ճաշակը, նրա ուշադրությունը հրավիրելով հագուստին, լսած երաժշտությանը, վարվելակերպին, շրջակա աշխարհը դիտելիս: Դասարանի կահավորումը, կազմակերպված միջոցառումները, պատի թերթերը, արշավներն ու էքսկուրսիաները նույնպես նպաստելու են դրան :*

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն**. *Հայ աշակերտի մեջ անհրաժեշտ է ամրապնդել հայրենիքի գիտակցումը, դրա հանդեպ սիրո ձևավորումը: Այն պետք է սկսել սեփական բակը, դպրոցը, գյուղը սիրելով: Դրան կարելի է հասնել զրույցների, ֆիլմերի դիտման հայրենիքի տարբեր անկյունների բացահայտմամբ:*

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն**. *Աշակերտը փոքրուց պիտի հասկանա, որ առողջության հիմքը ֆիզիկական ակտիվությունն է : Ազատ ժամանակ ակտիվ խաղերի կազմակերպումը, տանը ռեժիմին հետևելը, մաքուր օդում զբոսանքները, սննդակարգը հետագայում ամուր առողջություն ունենալու հիմքն են:*

3.5 **Աշխատանքային դաստիարակություն**. *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

3.6 **Բնապահպանական դաստիարակություն.** *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը զլոբալ է:*

3.7 **Դպրոց-ընտանիք կապը.** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Կարևոր է կապը պահել ծնողների հետ, ժամանակին կանխելու աշակերտի մոտ ծագած բնավորության շեղումները, բացասական երևույթները կանխելու և դրական հատկանիշներն ամրապնդելու համար:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա- դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Կազմակերպչական,ավագի ընտրություն | | աշակերտ<br>դասղեկ |
| II | Ամռանը կարդացած ամենահետաքրքիր գրքերի քննարկում | | բուժքույր<br>դասղեկ |
| III | Դասընկերների հետ հարաբերությունները | | աշակերտ<br>դասղեկ |
| IV | Անկախ հայրենիքը որպեսբարձրագույն արժեք | | աշակերտ<br>դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| V | Ուսուցիչները որպես անփոխարինելի ավագընկերներ | | աշակերտ<br>դասղեկ |
| VI | Շատ սովորությունները չարիք են | | աշակերտ<br>դասղեկ |
| VII | Միասնականություն և համախմբվածություն | | աշակերտ<br>դասղեկ |
| VIII | Հեռախոսը և ինտերնետ | | աշակերտ<br>դասղեկ |
| IX | Ամենակարևոր մասնագիտությունը | | աշակերտ<br>դասղեկ |
| X | Գիտելիքն ուժ է | | աշակերտ<br>դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XI | Յուրաքանչյուրիս կարծիքը կարևոր է | | աշակերտ<br>դասղեկ |
| XII | Ընկերոջ օգնության կարիք ունի | | աշակերտ<br>դասղեկ |
| XIII | Հիգիենա | | աշակերտ<br>դասղեկ |
| XIV | Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մերդասարանում | | աշակերտ<br>դասղեկ |
| XV | Ինչպես չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը | | աշակերտ<br>դասղեկ |
| XVI | Ինչու են լալիս մայրերը | | աշակերտ<br>դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XVII | Դառն է ճշմարտությունը ,ինչպես նայել ճշմարտության աչքերին | | աշակերտ դասղեկ |
| XVIII | Աղջիկներ , շնորհավոր ձեր տոնը | | աշակերտ դասղեկ |
| XIX | Իմ կատարած լավ գործերը | | աշակերտ դասղեկ |
| XX | Պատասխանատվություն | | աշակերտ դասղեկ |
| XXI | Վատ սովորություններ: Ինչպես պայքարել դրանց դեմ | | աշակերտ դասղեկ |
| XXII | Ինչպես պայքարել անտարբերության դեմ | | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XXIII | Մեր հերոսները | | աշակերտ<br>դասղեկ |
| XXIV | Աշխատանքի բաժանում | | Աշակերտ<br>դասղեկ |
| XXV | Իմ կարողություններն ու հետաքրքրությունները | | աշակերտ<br>դասղեկ |
| XXVI | Ինչպես վերահսկել հույզերը | | աշակերտ<br>դասղեկ |
| XXVII | Մարդու Ինքնուրույնությունը: Ինչպես է այն արտահայտվում | | աշակերտ<br>դասղեկ |
| XXVIII | Տակտի զգացողությունը հասուն լինելու նշան է | | Աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դասղեկ |
| XXIX | Սպորտով զբաղվելը առողջություն է | | աշակերտ<br>դասղեկ |
| XXX | Ինչպես հասկանալ | | աշակերտ<br>դասղեկ |
| XXXI | Արտագաղթի վտանգը | | աշակերտ<br>դասղեկ |
| XXXII | Հայաստանիս ապագան | | աշակերտ<br>դասղեկ |
| XXXIII | Ինչ գեղեցիկ է աշխարհը | | աշակերտ<br>դասղեկ |
| XXXIV | Ամառային հանձնարարություններ | | դասղեկ |